ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

10. 02. 2010թ. Ահ-107

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Պրն՝ Տ. Դավթյանին

Հարգելի պարոն Դավթյան

Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար կապիտալ վերանորոգման աշխատանքների մեկ անձից գնման ընթացակարգի արձանագրությունը:

Առդիր էջ:

ՀԱՐԳԱՆՔՆԵՐՈՎ՝ Գ. Ղարիբջանյան

1895-10
10.02.10թ

0095, Երևան, Մ. Բաղրամյան պող., 19 Հեռ.՝ 529695, Ֆաքս՝ 529695

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ.Ղարիբջանյան

Կ.Տ

ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Հիմնական տեղեկություններ գնման մասին

1.1. Պատվիրատուի

Անվանումը	ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմ
Հասցե	ք. Երևան Բաղրամյան 19

1.2. Գնման առարկայի տեսակը

ապրանք	☐	աշխատանք	v	ծառայություն	☐

1.3. Կարիքի բավարարման միջոցը

գնում	v	վարձակալություն	☐	լիզինգ	☐

1.4. Գնման առարկայի համառոտ նկարագիրը

Ոսկեզոծ դահլիճի վերանորոգում

1.5. Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձի

Անվանումը (անունը, ազգանունը)	"Վեկս" ՍՊԸ
Հասցեն	ք. Երևան, Մասիսի 5

1.6. Կնքված գնման պայմանագրի (կցվում է)

Ծածկագիրը		ԱԺ 01
Կնքման ամսաթիվը		25,01,2010թ
Գործողության ժամկետը		Մինչև կողմերի կողմից պարտավորությունների կատարման ավարտը
Գինը	26 471 970,0	(քսանվեց միլիոն չորս հարյուր յոթանասունմեկ հազար ինը հարյուր յոթանասուն) դրամ

Գնման ֆինանսավորման աղբյուրը 2010 ՀՀ պետական բյուջե

1.8. Գնումների պաշտոնական տեղեկագրում կնքված պայմանագրի մասին տեղեկատվություն հրապարակելու նպատակով պատվիրատուն լիազոր մարմնին ներկայացրե՞լ է պահանջվող տեղեկատվության տեքստը

Այո	V	Ոչ	☐

2. Գնման գործընթացի նախապատրաստումը

2.1. Գնման պահանջի ծագման

Իրավական հիմքը

ՀՀ կառավարության 24,12,09թ-ի N1522-Ն որոշում

Օրը, ամսաթիվը 27 Հունվարի 2010թ

2.2. Պատվիրատուի ղեկավարը սահմանել է՝

Պատասխանատու ստորաբաժանում ☐ Տեխնիկական հսկողության հանձնաժողով ☐

Անվանումը Նյութատեխնիկական մատակարարման բաժին

Իրավասությունը վերապահելու հիմքը ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավարի հրաման

Ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը Շենքերի շահագործման բաժնի պետ Մ. Սամսոնյան

2.3. Մեկ անձից գնման ձևի կիրառման պայմանն ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի համապատասխան կետի՝

☐ գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, ինչը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, մրցակցության բացակայությամբ, լիցենզիայի առկայությամբ.

☐ արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և գնման այլ ձևի կիրառումը՝ ժամկետի առումով անհնար է, պայմանով որ նման պահանջը հնարավոր չէր կանխատեսել, ինչպես նաև եթե գնման առարկան ներառված չէ պարբերական մրցույթով կնքված պայմանագրերում.

☐ պատվիրատուն, որևէ անձից կատարելով գնում, որոշում է լրացուցիչ գնում կատարել նույն անձից, պայմանով որ դրա գինը չգերազանցի սկզբնական գնման պայմանագրի գնի քսան տոկոսը: Միևնույն անձից սույն կետի կիրառմամբ լրացուցիչ գնում կարող է կատարվել մեկ անգամ:

2.4. Ոսկեզոծ դահլիճի վերանորոգման ծեռքբերման համար ֆինանսական միջոցները նախատեսված են ՀՀ կառավարության 24,12,09թ,-ի N 1522-Ն որոշմամբ: Նշված աշխատանքների ձեռքբերման նախահաշվային գինը կազմում է 26471970 դրամ: Հաշվի առնելով այն, որ նշված աշխատանքները ողջ ծավալով պետք է ձեռք բերվեն ՀՀ կառավարության 24/12/09թ, թիվ 1522-Ն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 աշխատանքային օրվա ընթացքում, հայտնում ենք, որ ծագել է գնման անհետաձգելի պահանջ և գնման այլ ձևի կիրառումը՝ ժամկետի առումով անհնար է, գնման առարկան ներառված չէ պարբերական մրցույթով կնքված պայմանագրերում, ուստի գնման ընթացակարգը կազմակերպվել է մեկ անձից գնման ձևով :

3. Գնման պայմանագրի կնքումը

3.1. Գնման պայմանագիրը կնքելու նպատակով պատվիրատուի առաջարկը ներկայացնելու միջոցը՝

Մեկ անձին պայմանագիր կնքելու առաջարկի ներկայացում ☐

3.2. Տեղեկություններ այն անձանց (անձի) մասին որոնց ուղարկվել է պատվիրատուի առաջարկը.

N	Անվանումը (անունը, ազգանունը)	Հասցեն	Ներկայացված առաջարկի հիմքը՝ գրության համարը և ամսաթիվը (կցվում է)
1	2	3	4
	"Վեկս" ՍՊԸ	ք. Երևան, Մասիսի 5	ՆԳԿ-277/1 21,01,2010թ

3.3. Տեղեկություններ պատվիրատուի առաջարկը ընդունած անձանց մերաբերյալ.

N	Անվանումը (անունը, ազգանունը)	Հասցեն	Ներկայացված առաջարկի հիմքը՝ գրության համարը և ամսաթիվը (կցվում է)
1	2	3	4
	"Վեկս" ՍՊԸ	ք. Երևան, Մասիսի 5	1/1 22,01,2010թ,

3.4. Տեղեկություններ պատվիրատուի կողմից մերժված առաջարկությունների վերաբերյալ.

Մերժե՞լ է Պատվիրատուն որևէ առաջարկ՝ այն պայմանագրի կնքման նպատակով մասնակցին ուղարկված գրությամբ սահմանված կարգի խախտմամբ ներկայացված լինելու պատճառով.

Այո ☐ Ոչ ☐

Մերժե՞լ է պատվիրատուն որևէ առաջարկ այն պատճառով, որ առաջարկը ներկայացրած մասնակիցը սահմանված կար•ով չի հավաստել գնումներին մասնակցության իր իրավունքը.

Այո ☐ Ոչ ☐

Մերժե՞լ է պատվիրատուն որևէ առաջարկ այն պատճառով, որ առաջարկը ներկայացրած մասնակիցը սահմանված կար•ով չի հավաստել որակավորման իր տվյալները

Այո ☐ Ոչ ☐

3.5. Բանակցություններ
Պատվիրատուն վարե՞լ է բանակցություններ

Այո ☐ Ոչ ☐

4. Կասեցում
Կասեցրե՞լ է պատվիարատուն գնման գործընթացը.

Այո ☐ Ոչ ☐

5. Բողոքարկում
Ստացե՞լ է պատվիրատուն գնման գործընթացի հետ կապված որևէ բողոք.

Այո ☐ Ոչ ☐

Բողոքարկվե՞լ են պատվիրատուի գործողությունները լիազոր մարմնին.

Այո ☐ Ոչ ☐

Անունը, ազգանունը Մերուժան Սամսոնյան

Պաշտոնը Նյութատեխնիկական մատակարարման առաջատար մասնագետ

Հեռախոսը /աշխ./ 58 83 72

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ ԱԺ 01

ք. Երևան «25» «01» 2010թ.

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը՝ այսուհետ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար Գ.Ղարիբջանյանի, որը գործում է Ազգային ժողովի Կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Վեկս» ՍՊԸ-ն՝ այսուհետ «Կապալառու», ի դեմս տնօրեն Կ. Սարգյանի, որը գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ կատարել ՀՀ Ազգային ժողովի «Ոսկեզոծ դահլիճի» վերանորոգման շինարարական աշխատանքները (այսուհետ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայամանգրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով նախատեսված աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվում ՀՀ կառավարության 24/12/09թ. թիվ 1522-Ն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 աշխատանքային օր:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կապալառուի գործունեությանը.

2.1.2 Առանց Աշխատանքի արդյունքի դիմաց վարձատրելու՝ միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին և (կամ) խախտել է Աշխատանքի կատարման ժամկետը, և Աշխատանքը չի կարող կատարվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում: Ինչպես նաև միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կապալառուի կողմից չի կատարվել կամ ամբողջությամբ չի կատարվել սույն պայմանագրի 2.4.5 կետով սահմանված պարտավորությունը:

Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Կապալառուին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կապալառուն պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Պատվիրատուի կրած վնասները, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

2.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին և նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին

չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.4 Մինչև Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ այդ մասին առնվազն 10 օր առաջ տեղեկացնելով Կապալառուին և հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել նախագծանախահաշվային փաստաթղթերին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կապալառուին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել սույն պայմանագրի 4-րդ կետում նախատեսված չափով, ժամկետներում և կարգով վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կապալառուն իրավունք ունի՝

2.3.1 Մինչև Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում նրանից պահանջել վճարելու փաստացի կատարված Աշխատանքի համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքի:

2.3.2 Մինչև Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 10 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին:

2.3.3 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կապալառուն պարտավոր է՝

2.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

2.4.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.3 Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.4.4 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.5 Իր հաշվին՝ Պատվիրատուի կողմից սահմանված իրատեսական ժամկետում վերացնել սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած բոլոր թերությունները:

3. Կատարված աշխատանքների հանձնման և ընդունման կարգը

3.1. Աշխատանքների ընդունումն իրականացվում է Կապալառուի կողմից ներկայացվող աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրության, ինչպես նաև նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված այլ փաստաթղթերի հիման վրա:

3.2.Աշխատանքի կատարման պահից 2 /երկու/ աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում այդ աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

3.3. Պատվիրատուն Աշխատանքի հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշվետու այլ փաստաթղթերը ստանալու պահից 3 օրվա ընթացքում Կապալառուին է ուղարկում հանձնման-ընդունման ստորագրված արձանագրության մեկ օրինակը կամ դրա պատճառաբանված մերժումը:

3.4. Կապալառուի կողմից ավարտված աշխատանքները Պատվիրատուի կողմից ընդունված են համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

3.5. Աշխատանքի արդյունքը նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4. Աշխատանքի գինը և վարձատրությունը:

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է՝ **26.471.970 (Քսանվեց միլիոն չորս հարյուր յոթանասունմեկ հազար ինը հարյուր յոթանասուն)** ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով, անկանխիկ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետի պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման, 2.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու յուրաքանչյուր դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,05 %-ի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի արժեքի 0,05 %-ի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանք կատարելու արդյունքում Կապալառուին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քլաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Այլ պայմաններ

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի կողմից իրենց պարտավորությունների կատարման ավարտը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրի ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.2 Սույն պայմանագրով Կապալառուի կողմից կատարված Աշխատանքի համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ամբողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացույցային օրը: Կապալառուի կողմից սույն պայմանագրով նախատեսված երաշխիքային պայմանների չկատարումը հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

7.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.4. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.5. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

7.6. Սույն պայմանագիրը կազմված է չորս էջից, կնքված է հայերեն լեզվով, 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայամանագրի N1 և N2 հավելվածները հանդիսանում են սույն պայամանագրի անբաժանելի մասը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»	«ԿԱՊԱԼԱՌՈՒ»
ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմ	"Վեկս" ՍՊԸ
ք. Երևան, Բաղրամյան 19	ք. Երևան, Մասիսի 5
ՀՎՀՀ 3800008519	ՀՎՀՀ 01525774
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական գանձարան	"Ամերիաբանկ" ՓԲԸ
Հ/Հ 900011020089	Հ/Հ 1570003812260100
---------- (ստորագրություն)	---------- (ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

ՀԱՎԵԼՎԱԾ N1

25.01.2010 թ.կնքված պայմանագիր N ԱԺ 01

ք.Երևան 25.01.2010թ.

N	անվանումը	չափ. միավոր	քանակ	միավորի արժեք	գումար
1	Պատերի եւ դռների բացվածքների երեսպատում	քմ	78.9	148000	11677200
2	Դռների միակողմանի երեսպատում	քմ	12.6	148000	1864800
3	Հատակի հոկում, յաքապատում	քմ	1250	3500	4375000
4	Պատերի նորոգում /գաջակրապատման աշխատանքներ/	քմ	450	3500	1575000
5	Պատերի նորոգում /ներկարարարական աշխատանքներ/	քմ	450	3500	1575000
6	Պատուհանաների վերանորոգում եւ յաքապատում	քմ	21.23	23525	499436
7	Առաստաղի ձեւավորում քիվերով	գ/մ	26	3955	102830
8	Դռների շրջանակների եւ պատուհանների նախշազարդման աշխատանքներ	քմ	5.41	72220	390710
	ընդամենը				22059976
	ԱԱՀ				4411994
	ընդամենը				26471970

Վճարման՝ Քսանվեց միլիոն չորս հարյուր յոթանասունմեկ հազար ինը հարյուր յոթանասուն դրամ

"ՎԵԿՍ" ՍՊԸ

ք.Երևան, Մասիսի 5,
ՀՎՀՀ 01525774
1570003812260100
"Ամերիաբանկ" ՓԲԸ

Կ. Սարգսյան

ՀՀ Ազգային Ժողով

ք.Երևան,Բաղրամյան պ.19
ՀՎՀՀ 00008519
հ/հ 900011020022
N1 Գանձապետարան

Հ.Մկրտչյան

ՀԱՎԵԼՎԱԾ N2

Վճարման ժամանակացույց

Պայմանագիր ՈԱԺ 01 25,01,2010թ,

(հազար դրամ)

N	Ապրանքի, աշխատանքների, ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին												
		I-ին եռամսյակ			2-րդ եռամսյակ			3-րդ եռամսյակ			4-րդ եռամսյակ			Ընդամենը տարեկան
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմ-բեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմ-բեր	
1	2	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
1	Ոսկեզոծ դահլիճի վերանորոգում	-	26 471,970	26 471,970	26 471,970	26 471,970	26 471,970	26 471,970	26 471,970	26 471,970	26 471,970	26 471,970	26 471,970	26 471,970

** Վճարման ժամանակացույցն ըստ աճողական կարգի

	Վաճառող	Գնորդ
Անվանումը	"Վեկս" ՍՊԸ	ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմ
Հասցե	ք. Երևան Մասիսի 5	Ք. Երևան, Բաղրամյան 19
ՀՀ ՀՎ	01525774	3800008519
Բանկ	"Ամերիաբանկ"	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ	1570003812260100	900011020089

Տնօրեն Կ. Մարգսյան
/պաշտոնը, անունը, ազգանունը/
/ստորագրություն/
ԿՏ

ՀՀ ԱԺ աշխատակազմի դեկավար Գ. Ղաբիբջանյան
/պաշտոնը, անունը, ազգանունը/
/ստորագրություն/
ԿՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ

N ԳԿ – 277/1

«21» հունվար 2010թ.

«Վեկս» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ

պարոն Կ.Սարգսյանին

Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ Ազգային ժողովի Ոսկեզոծ դահլիճի վերանորոգման համար անհրաժեշտություն է առաջացել կատարել շինարարական աշխատանքներ:

Առաջարկվում է Ձեզ կատարել վերոհիշյալ աշխատանքները:

Գնումները ֆինանսավորվելու են 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնումների ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

Գնումներին մասնակցելու համար պատվիրատուին պետք է ներկայացվի հաստատված և ստորագրված հայտարարություն այն մասին, որ "Վեկս" ՍՊԸ -ն

1. ունի գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք , մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ.
2. դատական կարգով անվճարունակ չի ճանաչվել, լուծարման գործընթացում չի գտնվում, արգելանքի տակ չունի պայմանագրի կատարման համար հայտով ներկայացված գույք.
3. կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում.
   - դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,
   - գնման պայմանագիր կնքելու նպատակով չի ներկայացրել կեղծ տվյալներ,
   - իր գործողությամբ կամ անգործությամբ չի խախտել գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

Համաձայնության դեպքում խնդրում ենք ներկայացնել սույն գրության մեջ նշված հայտարարությունը և գնային առաջարկը:

Միաժամանակ, կից ներկայացնում ենք հիշյալ դահլիճի վերանորոգման պայմանագրի նախագիծը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Հ.ՄԿՐՏՉՅԱՆ

Երևան, Բաղրամյան 19

հեռ. 52-54-40, 58-82-06

1/1 22.01.10թ.

ՀՀ Ազգային Ժողովի գործերի կառավարիչ

պրն. Հ. Մկրտչյանին

Ի պատասխան Ձեր 21.01. 2010թ. N ԳԿ-277/1 գրության, սույնով հավաստում ենք, որ «Վեկս» ՍՊԸ-ն

- ունի գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ.
- դատական կարգով անվճարունակ չի ճանաչվել, լուծարման գործընթացում չի գտնվում, պայմանագրի կատարման համար անհրաժեշտ գույքը արգելանքի տակ չի գտնվում,
- կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում՝

1.դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար

2.գնման պայմանագիր կնքելու նպատակով չի ներկայացրել կեղծ տվյալներ,

3.իր գործողությամբ կամ անգործությամբ չի խախտել գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

«Վեկս» ՍՊԸ-ն հայտնում է իր համաձայնությունը՝ Ձեր վերոհիշյալ գրության մեջ նշված աշխատանքները կատարել 26 471 970 դրամով:

Հարգանքով՝

Կ. Սարգսյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԿՆՔՎԱԾ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՄԻՆ

(Հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 11- րդ հոդվածի համաձայն)

25,01,2010թ -ին **պատվիրատու `ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմ,**

որը գտնվում է ք. Երևան, Բաղրամյան 19 հասցեում և կատարող՝

"Վեկս" ՍՊԸ **որը գտնվում է** ք. Երևան, Մասիսի 5

հասցեյում, միջև կնքվել է մատակարարման **գնման պայմանագիր:**

Գնման առարկա է հանդիսանում՝ Ոսկեզոծ դահլիճի վերանորոգում

Պայմանագրի գինը կազմում է 26 471,970 հազար ՀՀ դրամ:

Գնումները կատարվում են Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովին

Ոսկեզոծ դահլիճի վերանորոգում ապահովելու նպատակով:

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ մեկ անձից գնումներ կատարելու ձևով:

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի աշխատակազմ